2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) 2020 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ 2020 թվականի գործունեության վերաբերյալ կառավարման մարմինների սույն զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Կազմակերպության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Կազմակերպությունը:

Կազմակերպության Վարչության անդամներ՝

Արամ Ղազարյան	**Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն**		04.05.2021թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		04.05.21
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարդան Հարոյան	**Վարչության անդամ, Գլխավոր գործառնական տնօրեն**		04.05.2021թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Զադրյան	**Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար**		04.05.2021թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ՖԻՆՔԱ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2020 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

1. Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
2. Էական դեպքերի նկարագիրը,
3. Կազմակերպության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

1. Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը

1.1. Ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» նիդերլանդական կազմակերպությունը:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013թ-ից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Կազմակերպությունն ունի 39 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:

1.2. Ֆինանսական գործունեության վերլուծություն

Սույն ֆինանսական գործունեության ամփոփ վերլուծության համար հիմք են հանդիսացել Կազմակերպության՝ 2020 թվականի տարեկան հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները:

Ակտիվներ

Կազմակերպության ընդհանուր ակտիվները 2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 21,538,870 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա վերջի 27,304,026 հազ. ՀՀ դրամ ընդհանուր ակտիվների համեմատ նվազելով 5,765,156 հազ. ՀՀ դրամով կամ 21.1%-ով:

Ակտիվների կառուցվածքը 2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Վարկեր

2020 թ. Դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 19,810,232 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա տարվա վերջի համեմատ նվազել է 17.2%-ով կամ 4,111,683 հազ. ՀՀ դրամով:

Հաճախորդներին տրված վարկերի նվազումը հիմնականում արդյունք էր կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամի, որի ընթացքում նոր վարկերի տրամադրումը գրեթե դադարել էր: Իսկ հետպատերազմյան ժամանակաշրջանում ժամկետանց պորտֆելի որակի վատթարացմամբ պայմանավորված՝ հիմնական ջանքերը ներդրվել են վարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքներում և առողջացման ծրագրերում:

2020թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ վարկատեսակների ներկայացվում է գծապատկեր 2-ում.



Գծապատկեր 2

2020թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ հաճախորդների տնտեսական գործունեության ոլորտների ներկայացվում է գծապատկեր 3-ում.



Գծապատկեր 3

2020 թվականին բնորոշ էր կորոնավիրուսով պայմանավորված մեծածավալ վարկային արձակուրդների տրամադրումը մարտից հունիս ամիսների ընթացքում, որոնց 98%-ը կատարվել է սկզբնական գրաֆիկներով տարատեսակ մարումները մինչև 3 ամիս ժամկետով սառեցնելով՝ դրանք հետագա ժամանակաշրջանների մարումներին գումարելու պայմանով: Կորոնավիրուսով պայմանավորված ընդհանուր վարկային պայմանների վերոնշյալ վերանայումների ծավալը կազմել է 10,163,713 հազ. ՀՀ դրամ, որի շուրջ 72.2 %-ը մարվել/առողջացել/կրկնակի վերանայվել է մինչև 2020 թվականի վերջը, և առ 31.12.2020թ. հաշվվում է կորոնավիրուսով պայմանավորված վերանայված պորտֆելի 2,827,058 հազ. ՀՀ դրամ մնացորդային մայր գումար, ինչը կազմում է ընդհանուր վերանայված/վերակառուցված վարկային պորտֆելի 51.6 %-ը:

Պարտավորություններ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության պարտավորությունները կազմել են 15,709,458 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա վերջի համեմատ նվազելով 21.8%-ով կամ 4,367,583 հազ. ՀՀ դրամով:

2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները կազմել են 7,201,127 ՀՀ դրամ կամ պարտավորությունների 45.8 %-ը, ինչը փաստում է, որ Կազմակերպության համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը:

Պարտավորությունների 32%–ը կազմում են Կազմակերպության կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերը 5,030,607 հազ. ՀՀ դրամի չափով:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցություն

Կազմակերպության ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը: Կորոնավիրուսի և հետպատերազմի ճգնաժամով պայմանավորված՝ վարկավորման ծավալների կրճատմանը զուգընթաց նվազել է նաև փաստացի ներգրավվող ռեսուրսների հարաբերական ծավալները՝ ի համեմատություն նախընթաց ժամանակաշրջանների: Այնուամենայնիվ Կազմակերպությունը շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ապագայում պոտենցիալ ներգրավվելիք ռեսուրսների ապահովման առումով: Ընդ որում, 2020թ. հուլիսից ի վեր Կազմակերպությունը վերսկսել է հաճախորդներին նորմալ վարկավորման գործընթացը:

2020 թվականին Կազմակերպության հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են եղել հետևյալ կազմակերպությունները՝ Symbiotics, Asian Development Bank, Developing World Markets, responsAbility, Bank im Bistum Essen eG, Frankfurt School Financial Services GmbH: Հուլիսին վաղաժամկետ մարվել է Asian Development Bank-ից ներգրավված մնացորդային 3,6 մլն դոլարի վարկը: Փոխարենը «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» մայր կազմակերպությունից ներգրավվել է նույնչափ 3,6 մլն դոլարի վարկ:

2020 թվականին Կազմակերպությունը շարունակել է համագործակցությունը Symbiotics գործընկերոջ հետ, որի շրջանակներում Կազմակերպությանը տրամադրվել է համապատասխանաբար 2,1 միլիոն դոլար վարկ:

Համագործակցություն տեղական ֆինանսական կազմակերպությունների հետ

2020 թվականին Կազմակերպությունը շարունակել է տեղական ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը, որի շրջանակներում ներգրավել է Արդշինբանկից 800 մլն ՀՀ դրամի վարկ և ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրկոլ Բանկից 2 միլիոն դոլարի վարկ:

Սեփական կապիտալ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 5,829,412 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է 1,397,572 հազ. ՀՀ դրամով կամ 19.3 %-ով: Սեփական կապիտալի փոփոխությունը պայմանավորված է ինչպես հայտարարված և բաշխված շահաբաժիններով, այնպես էլ գործունեության ֆինանսական կորուստներով:

Եկամուտներ և ծախսեր

Կազմակերպության տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքում կազմել են 5,967,424 հազ. ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 8.7 %-ով կամ 566,984 հազ. ՀՀ դրամով: Տոկոսային և նմանատիպ եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել են 1,536,214 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.6%-ով կամ 8,642 հազ. ՀՀ դրամով:

Հաճախորդներին տրված վարկերի գծով հնարավոր կորուստների ծախսը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել է 2,648,743 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 152.8%-ով կամ 1,600,988 հազ. ՀՀ դրամով, ինչը պայմանավորված է ապագայի վարկային կորուստների սպասելիքներով, որոնք ձևավորվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համաձայն Կազմակերպության սուբյեկտիվ դատողությունների արդյունքում:

Շահութաբերության հիմնական ցուցանիշները

2020 թվականի գործունեության արդյունքում զուտ վնասը կազմել է 901,572 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության շահութաբերության (վնասաբերության) ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ - 13.2% ,

Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ - 3.5%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի(վնասի) ցուցանիշը (EPS) կազմել է -1,837.7 ՀՀ դրամ:

Կազմակերպության մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 11,882 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի (վնասի) ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է -6,5:

1.3. Ներքին հսկողության համակարգ

Ներքին հսկողության համակարգը Կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների և գործընթացների նկատմամբ հսկողության ապահովումն է:

Կազմակերպությունում ներկայումս ներդրված է արդյունավետ, միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, որն ամրագրված է Կազմակերպության ներքին իրավական ակտերով:

Ավելին, Կազմակերպությունում գործում են Ներքին հսկողության, Վարկային ռիսկերի կառավարման և Ներքին աուդիտի ստորաբաժանումներ, որոնք նպաստում են ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ներքին հսկողության բաժնի խնդիրն է Կազմակերպությունում ներդնել արդյունավետորեն գործող ներքին հսկողական համակարգ: Վարկային ռիսկերի կառավարման բաժնի գործառույթն է ապահովել ընդունելի ռիսկերի մակարդակ վարկավորման գործընթացներում: Ներքին աուդիտի բաժնի խնդիրն է բացահայտել Կազմակերպության նպատակների իրագործմանը խոչընդոտող հնարավոր ռիսկերի բացահայտումը և ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

1.4. Կազմակերպության աշխատակիցները

Նվիրված աշխատակիցները Կազմակերպության ամենամեծ ձեռքբերումներից են, Կազմակերպության հաջողության և հետագա զարգացման հիմնասյունը: Կազմակերպության հմուտ մասնագետներից կազմված թիմը համախմբված է մեկ ընդհանուր նպատակի շուրջ և ծառայում է կազմակերպության առաքելությանը, այն է՝ «Հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը»: Կազմակերպությունը առավել քան կարևորում է ընդունված արժեքային համակարգի չափանիշների, միջանձնային դրական հարաբերությունների պահպանումը, ջերմ մթնոլորտը, թափանցիկությունը և, ընդհանուր առմամբ, կորպորատիվ մշակույթը, ինչը ստեղծվել է աշխատակիցների ջանքերի շնորհիվ:

Կազմակերպության աշխատակիցները շարունակում են ջանք չխնայել՝ հաճախորդներին մատուցելով նորարական և օգտակար ֆինանսական ծառայություններ՝ հնարավորություն ընձեռելով ցածր եկամուտ ունեցող անհատներին և համայնքներին ներդրում կատարել իրենց ապագայում և կերտելու ավելի լուսավոր ապագա:

Աշխատանքների արդյունավետ կառավարմանն ու աշխատակիցների զարգացմանը մեծապես նպաստում են ներքին վերապատրաստումները՝ միտված զարգացնելու ֆինանսական տեղեկացվածությունը, հաղորդակցման և բանակցելու ունակությունները, ծանոթացնելու նոր պրոդուկտների և ծառայությունների մանրամասնություններին, վարկավորման տեխնոլոգիաներին, և ապահովելու վարվելակերպի կանոնների պահպանմանը, ինչպես նաև ապահովելու հաճախորդամետ մոտեցում և դրական միջանձնային հարաբերություններ:

Յուրաքանչյուր աշխատակցի հնարավորություն է տրվում զարգացնելու թե՛ մասնագիտական և թե՛ անձնային հատկանիշները, ինչպես նաև ունենալու մասնագիտական առաջխաղացում Կազմակերպության ներսում:

2020 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված աշխատակիցների թիմային ոգու ամրապնդմանը և միջանձնային փոխհարաբերությունների զարգացմանը:

Հիմքեր են ստեղծվել հայաստանյան բուհերից պրակտիկանտների ներգրավման համար, ինչը կարող է աջակցել նոր աշխատակիցների համալրման գործընթացին, քանի որ նրանք կարող են դառնալ մեր պոտենցիալ աշխատողները: Մշակվել է հստակ ծրագիր Կազմակերպության մի քանի բաժիններում պրակտիկան կազմակերպելու համար, ինչպես նաև մի շարք համալսարանների հետ արդեն ձեռք են բերվել նախնական համաձայնություններ:

Շարունակվում են իրականացվել աշխատակիցների գնահատման միջոցառումները, որոնք օգնում են հստակ և թափանցիկ տեղեկության հիման վրա գնահատել աշխատակցի ունակությունները, զարգացնել թույլ կողմերը և ստեղծել առաջխաղացման հնարավորություններ:

Շարունակվում են նաև բարելավվել աշխատակիցների համար նախատեսված արտոնությունները՝ բժշկական ապահովագրության պայմանները, աշխատակիցներին տրամադրվող վարկի պայմանները, որն ի դեպ, մեծ պահանջարկ է վայելում և օգնում է աշխատակիցներին բավարարելու իրենց ֆինանսական կարիքները անհամեմատ բարենպաստ պայմաններով:

Փորձը ցույց է տալիս, որ այս բոլոր գործընթացների արդյունքում աշխատակիցները դառնում են առավել պատրաստակամ և ճկուն՝ դիմավորելու նոր մարտահրավերներ և իրականացնելու արդյունավետ նորամուծություններ:

2020 թվականի վերջում Կազմակերպության աշխատակիցների թվաքանակը կազմել է 469 մարդ:

1.5. Տարածքային գործունեություն

Կազմակերպության մասնաճյուղերը տեղակայված են ՀՀ բոլոր 11 մարզերում, և 2020 թվականի վերջի դրությամբ դրանց թիվը կազմում է 39:

Կազմակերպությունը մշտապես իրականացնում է կադրերի որակավորման բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, մասնաճյուղերի կապիտալ վերանորոգմանը և տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ իր բոլոր մասնաճյուղերում:

2. Էական դեպքերի նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցի հրապարակման օրը Կազմակերպության գործունեությունում տեղի են ունեցել հետևյալ նշանակալի իրադարձությունները.

- Կազմակերպության Տնօրենների խորհրդի անդամները 2020թ. փետրվարին որոշում են կայացրել վաղաժամկետ դադարեցնել Հրաչյա Թոխմախյանի՝ որպես Ընկերության Գլխավոր Տնօրենի իրավասությունները և լուծել Ընկերության և նրա միջև 2018թ. նոյեմբերին կնքված աշխատանքային պայմանագիրը՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների:
- 2020 թվականի փետրվարին կազմակերպության միակ բաժնետերը որոշում է կայացրել. հաշվի առնելով տնօրենների խորհրդի որոշմամբ ներկայացված առաջարկը՝ Ընկերության գլխավոր ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահ Անուշ Պետրոսյանին 01.03.2020թ.-ից նշանակել Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար ՝ մինչև Ընկերության նոր գլխավոր տնօրենի նշանակումը:
- Կազմակերպության Տնօրենների խորհրդի անդամները 2020թ. փետրվարին որոշում են կայացրել Վարդան Հարոյանին 2020թ. փետրվարի 24-ից նշանակել որպես Ընկերության Գլխավոր գործառնական տնօրեն և վարչության անդամ:
- 2020 թվականի փետրվարի 28-ին կազմակերպության միակ բաժնետերը որոշեց նշանակել ՝ Ընկերության տնօրենների խորհրդի անդամ Ֆլորին Լիլային Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնում:
- 26.06.2020թ. Երևանի ժամանակով 16:00-ին տեղի է ունեցել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նիստը:
- 2020 թվականի հունիսի 30-ին կազմակերպության միակ բաժնետերը որոշեց Ընկերության բաժնետոմսերի դիմաց շահութաբաժնի վճարմանն ուղղել Ընկերության 2019թ. շահույթից 496,000 հզ. ՀՀ դրամը, ներառյալ հարկերը:
- 2020 թվականի հուլիսի 29-ին կազմակերպության միակ բաժնետերը, հաշվի առնելով Ընկերության տնօրենների խորհրդի 15.07.2020թ. թիվ 27/2020 որոշմամբ ներկայացված առաջարկը, որոշեց Վարդան Գևորգյանին 2020թ. օգոստոսի 1-ից նշանակել Ընկերության Գլխավոր Տնօրենի և վարչության նախագահի պաշտոնում 2 (երկու) տարի ժամկետով և նրա պաշտոնավարման սկիզբ համարել ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցման պահը:
- 2020 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 49/2020 որոշմամբ կազմակերպության Տնօրենների խորհրդի անդամները որոշեցին 2020թ. դեկտեմբերի 28-ից վաղաժամկետ դադարեցնել Վարդան Գևորգյանի՝ որպես Ընկերության Գլխավոր Տնօրենի և վարչության նախագահի իրավասությունները՝ հաշվի առնելով վերջինիս կողմից իրավասությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ ներկայացված դիմումը:

- 23.11.2020թ. թիվ 46/2020 որոշմամբ Ընկերության տնօրենների խորհրդի անդամները որոշեցին 2021թ. հունվարի 11-ից դադարեցնել Ընկերության «Ապարան», «Եղվարդ», «Մալաթիա», «Ճամբարակ», «Մյասնիկյան», «Սիսիան», «Դիլիջան», «Շիրակ», և «Տաշիր» մասնաճյուղերի գործունեությունը:
- Համաձայն Ընկերության միակ բաժնետիրոջ 08.01.2021թ. թիվ 01/2021 որոշման, 2021թ.-ի հունվարի 18-ից Արամ Ղազարյանը նշանակվել է Ընկերության Գլխավոր Տնօրենի և վարչության նախագահի պաշտոնում 2 (երկու) տարի ժամկետով և նրա պաշտոնավարման սկիզբ է համարվում ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցման պահը:

3. Կազմակերպության հետագա զարգացման նկարագիրը

Կազմակերպության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.

- վարկային պորտֆելի որակի բարելավում, հաճախորդների վարկունակության գնահատման բարելավման և պատասխանատու ֆինանսավորում իրականացնելու միջոցով,
- հաճախորդների դրական փորձառություն ապահովելու միջոցով հաճախորդների պահպանման ցուցանիշի բարելավում, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավում,
- ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա, ֆինանսավորող կազմակերպությունների ցանցի ընդլայնում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում,
- գործարար գործընթացների օպտիմալացում՝ պահպանելով գործառնական ռիսկերի ընդունելի մակարդակը,
- աշխատակիցների որակավորման բարձրացում ներկազմակերպական և արտաքին դասընթացների միջոցով,
- միկրոֆինանսավորման ոլորտում մրցակցային դիրքի բարելավում, նորարարական վարկատեսակների մշակում և ներդրում:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Կազմակերպության առջև դրված նպատակներով և միտված են բարելավել գործունեության ինչպես որակական բնութագրիչները, այնպես էլ ֆինանսական ցուցանիշները:

Հեռանկարային զարգացման ուղղությունները ապահովելու նպատակով Կազմակերպությունը պատրաստվում է իրագործել հետևյալ նախաձեռնությունները.

- Վարկավորման գործընթացների օպտիմալացում՝ հաճախորդներին ավել արագ սպասարկելու և հաճախորդի փորձառություն էլ ավելի բարելավելու նպատակով;
- Սքորինգային համակարգի մշակում և ներդնում, ինչը թույլ կտա հնարավորինս արագ վարկավորման որոշումներ կայացնել՝ նպաստելով էլ ավելի արդյունավետ գործունեությանը և հաճախորդի փորձառության բարելավմանը:
- Հիփոթեքային վարկերի տրամադրման նոր նախագծի մշակում, որն իր տեսակի մեջ առաջին անգամ է ներդրվելու կազմակերպության վարկային պրոդուկտների ցանկում, և հաճախորդների ներգրավման նոր այլընտրանքային աղբյուր է հանդիսանալու: Նշված ծրագրի շրջանակում ակնկալվում է Ազգային Հիփոթեքային Ընկերության հետ համագործակցություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	724,687	703,595
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		152	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	25	-	1,191,045
Հաճախորդներին տրված վարկեր	6	19,810,232	23,921,915
Շահութահարկի գծով ընթացիկ ակտիվներ		39,814	89,269
Օգտագործման իրավունքով ակտիվներ	9	447,912	716,814
Հիմնական միջոցներ	7	178,728	283,504
Ոչ նյութական ակտիվներ	8	253,591	332,469
Այլ ակտիվներ	10	83,754	65,415
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**21,538,870**	**27,304,026**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	25	-	1,223,359
Պարտքային արժեթղթերի թողարկում	11	5,030,607	4,940,839
Վարձակալության գծով պարտավորություններ	9	510,764	784,918
Այլ փոխառու միջոցներ	12,23	9,562,356	12,513,956
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	33,322	252,695
Այլ պարտավորություններ	13,25	572,409	361,275
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**15,709,458**	**20,077,042**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	15	4,905,960	4,905,960
Չբաշխված շահույթ		923,452	2,321,024
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**5,829,412**	**7,226,984**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**21,538,870**	**27,304,026**

Վարչության անունից՝

Արամ Ղազարյան
Գործադիր տնօրեն

Անուշ Պետրոսյան
Ֆինանսական տնօրեն/
Գլխավոր հաշվապահ

2021թ. մայիսի 4
Երևան, Հայաստանի Հանրապետություն

2021թ. մայիսի 4
Երևան, Հայաստանի Հանրապետություն

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Տոկոսային եկամուտ	16	6,499,827	6,961,770
Տոկոսային ծախս	16,26	(1,536,214)	(1,544,856)
Զուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստները		4,963,613	5,416,914
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստներ	5,6,25	(2,648,743)	(1,047,755)
Զուտ տոկոսային եկամուտ		**2,314,870**	**4,369,159**
Հաճախորդներին տրված վարկերի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումից վնաս	25	(155,631)	(13,357)
Զուտ օգուտ արտարժութային գործառնություններից	17	89,400	160,547
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		17,833	21,375
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր		(14,611)	(21,880)
Այլ եկամուտներ	18	67,439	34,519
Այլ կորուստներ	19,13	(340,412)	-
Զուտ ոչ տոկոսային (ծախս)/եկամուտ		**(335,982)**	**181,204**
Գործառնական եկամուտ		**1,978,888**	**4,550,363**
Անձնակազմի գծով ծախսեր		(1,748,827)	(1,996,299)
Մաշվածություն և ամորտիզացիա	7,8,9	(468,060)	(483,968)
Այլ գործառնական ծախսեր	21,26	(812,091)	(924,825)
Գործառնական ծախսեր		**(3,028,978)**	**(3,405,092)**
(Վնաս)/շահույթ՝ նախքան շահութահարկով հարկումը		**(1,050,090)**	**1,145,271**
Շահութահարկի գծով օգուտ/(ծախս)	20	148,518	(221,231)
Տարվա զուտ (վնաս)/ շահույթ		**(901,572)**	**924,040**
Ընդամենը տարվա համապարփակ (վնաս)/եկամուտ		**(901,572)**	**924,040**

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ		**4,905,960**	**2,812,385**	**7,718,345**
Տարվա շահույթ		-	924,040	**924,040**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**924,040**	**924,040**
Հայտարարված շահաբաժիններ	15	-	(1,415,401)	**(1,415,401)**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,905,960**	**2,321,024**	**7,226,984**
Տարվա վնաս		-	(901,572)	**(901,572)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		**-**	**(901,572)**	**(901,572)**
Հայտարարված շահաբաժիններ	15	-	(496,000)	**(496,000)**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,905,960**	**923,452**	**5,829,412**

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
(Վնաս)/շահույթ՝ նախքան հարկումը		(1,050,090)	1,145,271
Ճշգրտումներ՝			
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	5,6,25	2,648,743	1,047,755
Վարձակալության դադարեցումից եկամուտ	9	(15,336)	-
Շահույթ վարձակալության զիջումից	9	(11,854)	-
Զուտ փոփոխություններ հաշվեգրված տոկոսային գումարներում		(1,009,439)	(440,419)
Մաշվածություն և ամորտիզացիա		468,060	483,968
Հաճախորդներին տրված վարկերի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումից վնաս	25	155,631	13,357
Արտարժութային գործառնություններից զուտ վնաս	17	37,764	8,471
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**1,223,479**	**2,258,403**
Փոփոխություններ գործառնական ակտիվներում և պարտավորություններում			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների (աճ)/ նվազում		(152)	348
Հաճախորդներին տրված վարկերի նվազում/(աճ)		2,866,478	(677,509)
Այլ ակտիվների նվազում		18,339	90,634
Հետգնման պայմանագրերով պարտավորությունների (նվազում)/աճ		(1,209,687)	267,467
Այլ պարտավորությունների նվազում/(աճ)		210,767	(139,771)
Դրամական միջոցների ներհոսք գործառնական գործունեությունից՝ մինչև հարկումը		**3,109,224**	**1,799,572**
Վճարված շահութահարկ		(21,400)	(228,746)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**3,087,824**	**1,570,826**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ներդրումային արժեթղթերի օտարումից և մարումից ստացված մուտքեր		1,221,451	-
Հիմնական միջոցների ձեռքբերում		(24,990)	(71,825)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(24,012)	(133,444)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր		**1,172,449**	**(205,269)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վճարված շահաբաժիններ		(496,000)	(1,415,401)
Վարձակալության գծով պարտավորության մարում	14	(227,917)	(199,346)
Փոխառու միջոցներից մուտքեր	14	10,066,256	31,539,215
Փոխառու միջոցների մարումներ	14	(13,832,651)	(31,726,406)
Մուտքեր պարտատոմսերի թողարկումից		-	3,462,754
Թողարկված պարտատոմսերի մարում		-	(3,409,407)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր		**(4,490,312)**	**(1,748,591)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(230,039)**	(383,034)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ, համախառն	5	**704,494**	**936,412**
Փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		250,239	151,116
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ, համախառն	5	**724,694**	**704,494**
Հավելյալ տեղեկություններ՝			
Ստացված տոկոսագումարներ		5,106,198	6,239,320
Վճարված տոկոսագումարներ		(1,523,227)	(1,506,675)

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ստացել է հաճախորդներին տրված անհավաքագրելի վարկերի ոչ դրամական մարումներ 19,149 հազար դրամի չափով ակտիվների առգրավվման տեսքով:

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում: